242-42

Ա Զ Դ

Արարատ՝ երկրորդ շրջանը ըստ բաւականին յաջողութեամբ և ըստ կարելոյն օգտաւէտ և արժանաւոր ու հետաքրքրական բովանդակութեամբք աւարտելէն զկնի, ներկայ Ա. թուոյս կը թեւակոխէ Գ. րդ շրջանին ինչպէս արժանն է՝ կարեւոր և օգտաւէտ փոփոխութեամբ։

Սորա Խմբագիր — Միաբանութիւնը անցելոյն երաշխաւորութեամբ՝ առանց մեծամեծ խոստմանց և աւելորդ մեծաբանութեանց՝ կը յուսայ արդեամբք ներկայացնել իւր ճիգերը՝ ապագային մէջ՝ յօգուտ և 'ի զարգացումն և 'ի լուսաւորութիւն սիրելի Հայաստան ժողովրդեան։

Ինչպէս անցելոյն մէջ՝ Արարատայ Խմբագրութիւնը փոխադարձ համակրութեամբ և ջանիւք խրախուսեալ 'ի սիրելի մերազնէից, ներկայ Գ. րդ շրջանին մէջ մի և նոյն գնով բայց մի թերթ յաւելացուցած՝ այն է՝ փոխանակ 24 երեսի՝ մի և նոյն դիրքով՝ իւրաքանչիւր ամսագիրը 32 երեսէ բաղկացեալ հրատարակելով՝ կ'բաղձայ ամսագրոյս թերթից անձկութիւնը սակաւ առ սակաւ ընդարձակել, և առաւել ճոխ բովանդակութեամբ՝ ընտիր և պիտանի այլ և այլ նիւթեր պարունակած՝ Ազգայնոցս հետաքրքրութիւնքը և իղձերը յագեցնել, արժանի հանդիսանալով միանգամայն նոցա գոհութեան և մխիթարութեան. նոյնպէս անընկրկայ ակնկալութեամբ կ'մնայ Ազգայնոցս կրկին՝ ինչպէս և միշտ փոխադարձ համակրութեան և նպաստամատոյց ջանից. որով առաւել ևս քաջալերուած և ոգեւորուած՝ խանդակաթ սիրով զինքն պատրաստ կը հրատարակէ ապագային մէջ և ևս մեծ և բազմարդիւն փոփոխութեանց ենթարկել զԱրարատ, նա և պատկերազարդ նիւթեր պարունակելով 'ի նմին։

Թէպէտ Արարատայ Խմբագրութիւնը արդէն քաջ գիտէ և համոզուած է՝ մերազնէից այն վեհանձն յատկութեանց և Հայրենասիրական փոյթեռանդն բաղձանաց վերայ, որով կը սիրեն նոքա Արժանաւորները և բարենպատակ օգտաւէտ ջանքերը և ձեռնարկութիւնները մեծարել, և՝ բանիւք և՝ արդեամբք խրախուսել, սակայն դարձեալ աւելորդ չը՝համարիր խնդրել 'ի սիրելի Ազգայնոց, որպէս զի վայելելով՝ Խմբագիր — Միաբանութեան գրութեան ներածին չափ՝ բազմաքիրան և բարենպատակ ճգանց արդիւնքները, թող բարեհաճին նուիրել սմին իւրեանց առատասիրտ և առաքինասէր աջակցութիւնը։ Որով անշուշտ երկուց

կողմանց փոխադարձ իրաւանց և պարտաւորութեանց անթերի կատարմամբ՝ մի դեղեցիկ Դ-Ն-Ի-Ն և Ջ-Ն-Ա-Ի-Ն գոյացած, ապագային մէջ բարեացաւիթ ու վսեմ աշխատութեանց արդասիքներ կը ծնանին 'ի լուսաւորութիւն և 'ի հսկայաքայլ յառաջադիմութիւն Հայորերոյն։

Դա և կը խնդրուի Ազգայնոցս, զի որք ցանկան բաժանորդագրուիլ Ամսագրոյս, թող բարեհաճին յղել իւրեանց հասցէները՝ որքան կարելի է՝ ճշտութեամբ, այսինքն, անունը, ազգանունը կամ մականունը, որ նահանգին կամ գաւառին մէջ, որ քաղաքին կամ գիւղաքաղաքին և կամ գեղջ, և եթէ գիւղաքաղաք և գիւղ է, որ կողմի՝ այսինքն՝ որ քաղաքի սուրհանդակով (փոշտ) ստանալիքը, և 'ի դէպս՝ եթէ վաճառականութեամբ և կամ որպիսի և իցէ գործերով հեռանան իւրեանց բնակած տեղերէն, թող մի անձն նշանակեն, որպէս զի խմբագրութեան ուղղակի խրկած ամսագիրները իւրաքանչիւր ամսոյ մէջ՝ առանց (բաժանորդի) բացակայութեան պատճառաւ յետս խրկուելու՝ հասանին անկորուստ բաժանորդաց և կամ իւրեանց 'ի դիմաց նշանակեալ անձանց ձեռաց։ Որովհետև մի և նոյն անունով տեղեր մի քանի կողմեր գտնուած՝ նոր 'ի նորոյ կ'իմանամք, թէ՝ սխալմամբ կ'երթան, և երբեմն բաժանորդաց բացակայութեան պատճառաւ կամ յետս կը դառնան և կամ աւելի ևս կը չքանան ամսագիրները, ինչպէս երկու տարուան, այնէ՝ Արարատայ Ա. և Բ. շրջաններու մէջ՝ փորձերը ապացուցած են. ուստի և մի քանի տեղեր բաժանորդք 'ի զուր Խմբագրութեան վերայ մեղադիր կը լինին և կը դժգոհանան։

Իսկ եթէ այսպիսի ջանքերով կրկին պատահի՝ որ բաժանորդք երկու ամիս միջոցով՝ առանց Խմբագրութեան կողմանէ մի ազգ և տեղեկութիւն ստանալոյ՝ դըժուարանան ընդունել ամսագիրները 'ի ժամանակին, կը խնդրուի բաժանորդներէն բարեհաճիլ անմիջապէս փութալ և հաղորդել Խմբագրոնեան և կամ Տպարանական ժողովոյ Մայր Ընտրոյս, որպէս զի պէտք եղած միջոցները ձեռք առած՝ ամսագիրները ըստ պատկանելոցն անընդհատ և անկորուստ հասուցանելոյ տնօրէնութիւնքը կարգադրուին և պահանջուին՝ յորոց հարկն է։

Ի վերջոյ զայս իսկ արժան է յաւելուլ, որ Արարատը ինչպէս համայն մերազնէից Հոգևոր օգտին և զարգացման համար նուիրեալ Ամսագիր՝ պատրաստ է հիւրասիրել իւր էջերու մէջ կրօնական և ուսումնական՝ և Ազգայնոց այն ամեն յօդուածները և թարգմանութիւնները, որք աղաչ Էնյանցնական էրէց և 'ի Վիճաբանոնեանց, և միանգամայն օգտաբեր պարունակութիւններ կը բովանդակեն։